Հասցեատեր՝
«Գանձասար ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ gandzasarfc21@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11.12.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Նազելի Արսենյան
	Դավիթ Բակլաչյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝ ՊԼ-075

Խախտում՝

1. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Լուկ Ռոբերտ Մերրիլի (57795) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
2. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տարոն Ոսկանյանի (3781) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ)
3. Խաղի ժամանակահատվածում «Գանձասար» թիմի ադմինիստրատոր Օրբելի Համբարձումյանի (11996) խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը դադարել է, բայց խաղի արդյունքի վրա ազդեցություն չի թողել և խաղը շարունակվել է (Հավելված 1 Ա, 17-րդ կետ)
4. Դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ հայհոյանքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ)
5. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստների կողմից սև թևկապ չկրելը (Հավելված 1 Ա, 78-րդ կետ)

Առաջնություն՝ Fastex Պրեմիեր Լիգա

Խաղ՝ «Գանձասար» - «ԲԿՄԱ», 28.11.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Լուկ Ռոբերտ Մերրիլին (57795) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 28-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի

(2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

2. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տարոն Ոսկանյանին (3781) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 28-ից սկսած:
Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տարոն Ոսկանյանի (3781) նկատմամբ փորձաշրջան սահմանել 5 (հինգ) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի ապրիլի 28-ը ներառյալ:
Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

3. «Գանձասար» թիմի ադմինիստրատոր Օրբելի Համբարձումյանին (11996) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 28-ից սկսած:
Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Գանձասար» թիմի ադմինիստրատոր Օրբելի Համբարձումյանի (11996) նկատմամբ փորձաշրջան սահմանել 5 (հինգ) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի ապրիլի 28-ը ներառյալ: «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

4. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի«Գանձասար ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
«Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:

5. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝«Գանձասար ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
«Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: